

ՀԱՅԿԱԲԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻ ՅԻՍՈՒՍԵԱՆ

(Շար. տես 299)

քրիստոնէական գիտութիւնը պարսկակա- նին հետ յարաբերութեան մէջ գտնուած էր կամ անոր ընդդիմադրած էր:

Վարդան Անեցիին խիստ շահագրգիռ երգը Աստուածութեան կրտսց վրայ (Եզե- կիէլ մարգարէին տեսած կառքը) իրերկրորդ կոչմանը մէջ, յետ հռչակելու այս կառքը իբր օրինակ և ընդունարան պարզ և անըն- նելի էութեան և իմացականութեան՝ որուն հաղորդ են ամէն բանաւոր էակներ, իմու- տաստի բուհաստեօրթ խօսքը կը վերջացնէ աղօթելով ի նպաստ քառազօր (այսինքն հանրական) զօրութեան, որպէս զի կարենայ բոլորովին կերպարանակից ըլլալ նախնա- կոն ՏԻՊԱՐԻՆ միշտ և յաւիտեան (1):

Այս ամենուն մէջ չկայ հաւատոյ հա- կառակ բան մը. և յիբաւի միթէ ճշմարիտ չէ՞ թէ կանխաւ ամէն իրաց տեսակները թանին մէջ գոյութիւն ունին, և մարդն ալ նախասահմանուած էր առ բարին:

Խնդիրն աւելի աղօթքին բանաձևին մէջ կը կայանայ, որ իսկուպէս պղատոնա- կան է և ըստ մեզի յարգի յիշատակարան մ'է և նշան մատենագրութեան մը՝ որ մինչև միջին դարուն կէտը շարունակեց, և այնուհետև ծառայեր է իբր անցքի կամուրջ պատկերներու և գաղափարներու՝ որոնք փոխանակուեցան այլ և այլ մշակոյթի շըր- ջանակներուն մէջ, որոնք իրարմէ տար- բեր էին և գուցէ ոխերիմ ալ, բայց միշտ իրարու սահմանակից:

Ի տօնի իխանացն

Սանակայ և Համագասկայ

Տրքդ. ԱՄՄՈՑ ԾԱՆՈՒԼԻ

Ուսուցչ. Յոյժ և Լատին լեզուաց

« Foscari » Արք. Լիկեոնիմ

Թրքմ. Հ. Ե. ՍԵՐԱԿՆԱՆ



(1) Անեցի վարդանայ վարդապետի Երզնէի վասն կրտսց Աստուածութեան ներքող - ապ. Հ. Բ. Սարգի- սեան Վրդ. Ս. Ղազար, 1919 էջ 10.

ԱՊՁՅԼ թէ ո՞վ էր Յակօր վարդապետս այս Յիսուսեան, յնաւ նա յառաջնում աւուր Նոյնմերբին, 1656 ամի Տեսան ի Բար լը դուկ (Bar-le-Duc) քաղաքի Գաղ- զիոյ, և յերկրորդում աւուր Հոկտեմբերին 1673 ամի, եմուտ ի կարգ. Յիսուսեան կրօնաւորաց: Յամին 1688 հրաման ստա- ցաւ գնալ ի Ջինաստան առաքելութեամբ՝ եթէ սակայն ջանք այոյց Յիսուսեանց հասանել յայն աշխարհ ի դերև ելեալ էին: Ի 25 աւուր Սեպտեմբերին նոյն ամի՝ եմուտ Յակօր Վիլլօտ ի նաւ ի Մար- սէյլ, դէմ եղեալ գնալ ի Տրապիզոն ընդ ճանապարհ կոստանդնուպօլսոյ, և անցա- նելով ընդ Երզրում (կարին) եհաս յերևան ի 6 Յունուարին յաշորդ 1689 տարւոյն: Գնաց անտի ի Գանձակ և յսկզբան մարտի ի Շամախի, ուր Յիսուսեանք յերկու ամաց Հետէ հաստատեալ էին դպրոց մի, որպէս և յայլ տեղիս ի Հայս: Յընթացս դեգեր- մանն անդ ի Շամախի՝ որ տեւեաց զամիսս հինգ՝ զհետ եղև Յակօր վարդապետ ուս- ման Հայ, Տաճիկ և Պարսիկ լեզուաց, և անցանելով ընդ կուր և Երասխ՝ յուղի ան- կաւ գնալ ի Պարսկաստան, և ընդ ճա- նապարհ Արտավիտայ, Սուլթանեայ, Սա- վայի և Գաղանայ ժամանեցաւ յԱսպահան մայրաքաղաք Պարսից՝ զայնու ժամանակաւ ի 16 Հոկտեմբերին նոյն ամի: Չկարա- ցեալ ի ձեռս բերել զհրամանագիր գնալոյ ի Ջինաստան ի պատճառս մահուան դեւ- պանին լեհաց յԱսպահան՝ հարկեցաւ Յա- կօր Վիլլօտ դառնալ յԵրոպա յամին 1690 ընդ ճանապարհ Երևանայ, կարնոյ և Տրապիզոնի: Այլ սակայն Յակօր Վիլլօտ չկարէր բնաւ հանգիստ մնալ, ուստի զկնի վեց ամաց յուղի անկաւ՝ գնալ վերստին ի Պարսկաստան, և յետ բազում դժուա- րութեանց զճանապարհայն՝ եհաս անփորձ ի մայրաքաղաքն յԱսպահան՝ յամին 1696: Քանիցս ջանացաւ հասանել ի Ջինաստան, այլ որքան ջանացաւ՝ սակաւ օգտեցաւ,

ուստի ստիպեալ դարձաւ վերստին յՊապական և անդ քննարկութեան երկուստեան ի վնաս Յիսուսեանց, որ ի մերն Նոր-Ջուղա, և ուսաւ լաւապէս գէշայ լեզուն: Յամին 1708 մեկնեցաւ Յակօբ վարդապետ ի Նոր-Ջուղայէ գնալ յաշխարհ հայրենեաց իւրոց՝ անցանելով ընդ Իսպրէժ, Երևան, Ղարս, Կարին, Եւզղիկիս, Նիկիտիան, և Կ. Պօլիս, և անտի ի Գաղղիա և հուսկ ուրեմն ի տիեզերահուշական Հոռովմ: Կնքեաց Յակօբ Վիլլօտ գմահականացուն ի հասակի 87 ամաց ի 14 Յունուարին, 1743, ի Սուրբ Նիկողայոս (St. Nicholas) առ երի Նանսի (Nancy) քաղաքին Գաղղիոյ: Հանգիստ ոսկերացն, զի ի կեանս իւր շատ վաստակեցաւ, շրջեցաւ և տանջեցաւ իսկ: Հեղինակ էր սո Գաղղիարէն լեզուսն մատենին՝ որ հրատարակեցաւ յամին 1730 անանուն, ընդ վերնագրուս «*Voyage d'un missionnaire de la compagnie de Jésus, en Turquie, en Perse, en Arménie, en Arabie et en Barbarie*»: Տարեալ էր Յակօբ Վիլլօտ ընդ իւր յԵւրոպա կարեոր ձեռագիր մատենան հայկականս, որք պահին ցարդ յազգային ճոխ մատենադարանին՝ որ ի Փարիզ մայրաքաղաքի:

Հրատարակեաց Յակօբ Վիլլօտ յամին 1714 ի Հոռովմ գլխատին-Հայ Բառարան՝ իւր, գործ հսկայ և բազմաքերտն վաստակոց արդիւնք: Բնկզբան բառարանին զնէ զհամառօտ քերականութիւն Հայ լեզուի, որով ի յայտ զայ խորին հմտութիւն նորա ի դասական լեզու մեր սքանչելարուեստ: Տայ ի վերջ բառարանին զցանկ Հայ կաթողիկոսաց՝ սկսեալ ի թաղէոս առաքելոյ, որ ասէ եկեալն էր յԵղեսիա յամի Տեառն 40, և յաջորդաբար բերէ զայն ցամն 1707՝ յորժամ Աղեքսանդր Ջուղաղայեցի նստի եպիսկոպոս յաթոռ Էջմիածնի: Հեղինակն զրէ գլղեքսանդր կաթողիկոսէ այսպէս:

«Աղեքսանդր Ջուղայոյ եպիսկոպոս Ստի յամի 1707, իսկ յամի 1709 գլղուկթ սիրոյն և հնազանդութեամ տայ առ Վղէմէճղոս զապմ ժԱ.րդ՝ գոր կուչէ երկցս երջամիկ, փոխանորդ քրիստոսի, Տիե-

զերկամ հայրապետ, գերիշխանական մեծութիւն, գերագոյն Օսխագահութիւն, հասարակաց հայրն, պետական զլուր, ամշիջամելի շահն կաթողիկէ և առաքելական եկեղեցւոյն: Յետ ույճորիկ զաստուկագոյն կրիւ շարժէ ըմդղէժ ուղղափառաց ընդ ամենայն պարսկաց երկիրն»:

Եկեցուց արդ ի պատմութիւն թղթոյն Աղեքսանդր կաթողիկոսի առ կղեմէս մետասաներորդ փափն Հոռովմայ: Բազմաճնուտ պատմիչն Հայր Միքայէլ Չամչեան զրելով զնարութենէ Տեառն Աղեքսանդրի Նոր-Ջուղայեցւոյ յաթոռ կաթողիկոսութեան Սրբոյ Էջմիածնի՝ յամին 1707, յաւելու և զայս:

«Սա իմք Աղեքսանդր յառաջ քամ զՍտեղծ իւր յաթոռ հայրապետութեամ ումէր ըմդղիմութիւն առ քաղեղեղեղեղեղեղ և առ աթոռն չուովմայ, և գրեալ իսկ էր գիրք մի փոքրիկ Գաղառակ բանիք, որոյ ըմդղէժ արար զայլ գիրք Ստեփաննոս Գաշտեցի ի Նոր-Ջուղայէ՝ մի առ մի պատասխանի տալով բանից Յորա իմաստուութեամբ:

1. Հնկատ մեծագիւր բառարանն է օրինակ զայս.
 Dictionarium
 Novum
 Latino - Armenium
 Ex
 Praecipuis Armeniae Linguae
 Scriptoribus concinnatum.
 In quo, praeter adiunctos singularum vocum sensus multiplices, multa etiam Theologica, Physica, Moralia, Historica, Matematica, Geographica, Chronologica suis quaeque locis passim explicantur.
 Accessit
 Tabula Chronologica Regum Patriarcarum
 Utriusque Armeniae.
 Auctore
 P. Jacobo Villote, soc. Jesu.
 Apud Armenios per Annos XXV. Missionario

Ք ա ո զ Ե ր ք
 Հ ա յ ա կ ա ն Լ Ե ղ ո ս Է
 Շ ա ր ա ղ ր Է Խ Լ
 յԱկօբ վարդապետէ ի կարգէն Յիսուսեանց.
 Romae Typis Sac. Congreg. de Propaganda Fide.
 ANNO MDCCCXIV.
 Superiorum. permissu.

ՊԱՐՄԿԱՂԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ ԱՇՈՒՂ ԵՄԱՐԹՈՒՆ ՕՂԻԻ

(Նրա մահուան Յիսուսականի ասիրով)

I.

Աշուղը

Պարսկահայ յայտնի աշուղներից մէկն է Յարթուն օղին, որ թողել է ընտարական բաւական արժէքաւոր երգեր, որոնցով նա մի համեստ էջ է գրաւում պարսկահայ աշուղական գրականութեան պատմութեան մէջ:

Նա այն աշուղներիցն է, որոնք անձանօթ են մնացել մեր բանահիւսութեան և բանասիրական աշխարհին: Նրան հանաչել են միայն իր շրջապատում և հարևան գաւառներում: Դրանից դուրս, հայրենիքն միւս շրջաններին, նա մնացել է անծանօթ: Նրան վիճակին են ենթարկւել և նրա երգերը: Նրա մահից յիսուն երկար և ձիգ տարիներ են անցել, ամբողջ կէս դար, և չնայած այդքան երկար ժամանակամիջոցին՝ նրա երգերը մնացել են փոշիների ներքոյ, անյայտութեան մէջ, Նրանցից և ոչ մէկը երգչի կենդանութեան օրով լոյս չեն տեսել:

Նրան ճակատագիրն են ունեցել մեր միջնադարեան երգիչները՝ կոստանդին Երզրէնկացի, Մկրտիչ Նաղաշ, Նաղաշ Յովնաթան, Նահապետ Գուշակ, և այլն: Նրանց երգերն էլ ձիգ տարիներ մնացել են անյայտութեան խաւարի մէջ և իրենց կենդանութեան օրով չեն հրատարակւել:

Այդպէս էր հայ իրականութիւնը երէկ, այդպէս է և այսօր...

Յարթուն օղու 50 տարուց աւելի անյայտ մնացած երգերն առաջին անգամ լոյս ընծայեցին 1921 թվին, Նոր Զուգարում, « Աշուղ Յարթուն օղի », Ա. Փարսկանը աշուղական գրականութեանից խուրագրերը կրող մի փոքրիկ տնտարակով: Այդ թւականից նա անցաւ աշուղական գրականութեան պատմութեան գիրքը: Նա

Այլ յորժամ մտաւ Աղեքսանդր յաթոռ կաթողիկոսութեան՝ ի բաց եթող գառաջիմ ընդդիմութիւն իւր, և կալուս տէր մեծ ընդ առաքիլական գահիմ չտոմարայ, և եցոյց պատիւ լատիմ կրօնաւորաց՝ որք հանդիպեցաւ յեջմիտիմ, և զվմի սակաւուց՝ յամի 1709. ԹժժԸ. ի Փետրվարի 25, յղեաց զիր սիրոյ և յարգութեան առ սրբազամ պապն Վրդմէս մետասաներորդ՝ ի դիմաց իւրոց և ի դիմաց համօրէմ վարդապետաց և բովանդակ Գօտիմ իւրոյ, յորում բողոքեցով զչոտմայ հայրապետն լինել փոխանորդ քրիստոսի և յաջորդ Գետրուի վիմի՝ անուամէ զՅա երիցս երջամիկ տիգրերակաւ հայրապետ, և պետակամ զլուխ, զերէշխանական մեծութիւն, և զերագոյմ մախագահութիւն, հայր հասարակաց քրիստոնէից, և ամէրէջանելի չահ կաթողիկէ և առաքելական եկեղեցոյ: Եւ առաջի եղեալ զսէր իւր և զիրաւոյցմ առ սրբազամ զանն չոտմայ, խնդրէ՝ զի ըստ հայրախնամ զՅոյմ արժամի պրասցէ առաքել զփոխադարձ պատասխանի յաթոն սրբոյ էջմիտանի, և մեք ասէ ընկալցուք զՅուղթ քեզ իբրև զաստուածատուր պատգամս Մովսէսի:

Այս մամակ յորժամ եհաս ի չոտմ, անդ զտաւ Յակոբ Վիլոդ լատիմ կրօնաւոր ի կարգէ Յիսուսեանց, և զի սա ըստ վկայելոյ իւրոյ զամս քում և ճիմզ շրջեալ էր յաշխարհիմ չայոց և Պարսից, և ումէր փոքր մի տեղիկութիւն հայկական լեզուի, թարգմանեաց ի լատիմ զՅուղթ կաթողիկոսիմ՝ թէպէտն ոչ հարազատ իմացուածով, եւ սրբազամ պապն Վրդմէս զրեաց ի յաջորդ ասի ի Մարտի 15 պատասխանի սիրով առ կաթողիկոսն և ընդ թղթոյն առաքեաց զմամակ դասամութեան՝ ստորագրել այմն. որումքոց հարևանցիկ գտնել արժամ է, զի Ղազար Չահկեցիմ ասէ ի զիրսն իւր յերես 606, թէ Աղեքսանդր կաթողիկոս գրեալ իցէ « Թուղթ ընդմութեան աւ Կղեմնեոս փափն Հոսմայ », եւ սակայն Յակոբ Վիլոդ՝ որ թարգմանեաց զայն թուղթ, յայտնի վկայէ՝ թէ այն էր ուղղափառական և սիրարարական, և ոչ դիմադրական. զՅոյմ վկայէ և տիրացու Մարգարիտ ժամանակակից, թէ « զրեաց թուղթս սիրոյ առ Վրդմէնդ պապն »:

(Շարունակելի) ՄԵՐՈՒՎ Գ. ՍԵՔՅԱՆՏ

Տգիտութեան պատերը անոնք են՝ զորս մենք կ'անգիտանանք:

ՈՐՊԱՆԵՐ

Ուր որ կրօնք կայ՝ հոն կ'ենթադրուի ամէն բարիք. ուր որ ան կը պակսի՝ հոն կ'ենթադրուի ամէն չարիք:

ՄԱԲԻԱՎԷԼԻԻ